ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թվականի N 337-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1685-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 24-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՋԼ ՏՈԲԱԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1685-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) ցանկը 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-6-րդ կետերով.

«

5.	24011035000	Վիրջինիա թութունի չմշակված տերև՝ մեջտեղի երկարաթելը չառանձնացրած	Գույնը՝ կանաչ, դեղին, դարչնագույն Չափսերը՝ 2-10 սմ	կգ		Իրանի Իսլամական Հանրապետություն, Հնդկաստան, Վիետնամ, Արգենտինայի Հանրապետություն	Իրանի Իսլամական Հանրապետություն, Հնդկաստան, Վիետնամ, Արգենտինայի Հանրապետություն		
6.	24011035000	Բարլի թութունի չմշակված տերև՝ մեջտեղի երկարաթելը չառանձնացրած	Գույնը՝ կանաչ, դեղին, դարչնագույն Չափսերը՝ 2-10 սմ	կգ		Իրանի Իսլամական Հանրապետություն, Հնդկաստան, Վիետնամ, Արգենտինայի Հանրապետություն	Իրանի Իսլամական Հանրապետություն, Հնդկաստան, Վիետնամ, Արգենտինայի Հանրապետություն		

».

2) հավելվածի ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «12 853 800 000» թիվը փոխարինել «14 932 800 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

21.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ